մար ուշադրութեան եւ հիացմունքի առարկայ։ Ֆրանսացի մտածողներին թւում է, որ ամենալաւ կարգերի հայրենիքը Անգլիան է, ուր կարող է ազատօրէն զարգանալ մարդու ազատ բնութիւնը։ Անգլիական գրականութեան արդիւնքները — Մօր, Դէֆօ, Բէկօն, Լօկկ — թարգմանւում էին Ֆրանսերէն ու տարածւում ժողովրդի մէջ։ ԺԸ. դարի 20-ական թուականներից սկսւում են Ֆրանսացիների ուղեւորութիւնները դէպի Անգլիա։ Ով ուզում էր իրեն պատրաստել կեանքի համար, անհրաժեշտ էր նկատում անպայմանօրէն Անգլիա այցելել։ Ֆրանսացու համար անգլիացիք մի խելացի-երջանիկ եւ հաւասարակշռուած ժողովուրդ է-ին, որի մօտ պիտի գնալ սովորելու» 1)։

Եւ յիրաւի. ժամանակի ամենանշանաւոր Ֆրանսացիները — Վօլտեր, Մոնտեսքիէօ, Ռուսսօ եւն. — ուխտի գնացին Անգլիա՝ տեսնելու այդ «երջանիկ» երկիրը եւ տեղն ու տեղը ծանօթանալու անգլիական ժողովրդի եւ նրա ստեղծած գեղեցիկ կարգերի հետ։

Ուրեմն, եթէ այսչափ զօրեղ էր Անգլիայի ազդեցութիւնը մի լուսաւոր Ֆրանսայի վրայ, ապա հասկանալի է, թէ նա ո՛րքան աւելի զօրաւոր պիտի լինէր մի Հնդկաստանի վրայ, որը Անգլիայի կալուածը լինելով, փաստօրէն նրա մի մասն էր կազմում, բազմաթիւ թելերով կապուած նրա հետ եւ ամբողջովին նրա ազդեցութեան տակ էր գտնւում։ Հետեւապէս բնական է միանգամայն, որ Հնդկաստանում ապրող եւ Շահամիրեանի նման ընդունակ եւ աչքաբաց մարդն եւս ազդուէր այդ գաղափարներից եւ օգտուէր նրանցով։

Անգլիայի քաղաքական կազմակերպութեան եւ այդ կազմակերպութիւնից հանուած քաղաքական ուսմունքների հիմքն են կազմում — անհատի ազատութիւնը, օրէնքի տիրապետութիւնը եւ ժողովրդի մասնակցութիւնը օրէնսդրութեան ու օրէնքի գործադրութեան մէջ։

Նոյն այդ գաղափարներն են, որ — ինչպէս տեսանք — Շահամիրեանն առաջարկում է ապագայ անկախ Հայաստանի համար։

Ահա թէ ինչո՛ւ անգլիական ազդեցութիւնը մեր հեղինակի վրայ կարող ենք համարել բոլոր ազդեցութիւններից ամենագլխաւորը։

* * *

«Որ. Փառաց»ի աւելի հետաքրքրական մասը նրա երկրորդ հատորն է, որը կազմում է առաջին հատորի մէջ արտայայտուած մտքերի մի տեսակ թանձրացումը։

Այժմ անցնենք նրա համառօտ քննութեան։

1) Վիպպեր՝ «Դասագիրք նոր պատմութեան»։

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

(ԱՄՍԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Գրեց՝ ՍԻՄԷԼ ՍԷԴ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս անգամ սկսենք ընտրութիւններից։

Ահա երեք ամիս է, յունուարի առաջին օրերից սկսած, որ ամբողջ Խորհրդ. Միութեան մէջ, կատարւում են խորհուրդների վերընտրութիւններ։ Եւ երեք ամիս է, որ Հայաստանի իշխանութիւնն ու Կոմկուսը ամբողջապէս կըլանուած են այդ գործով։ Ժողով, ճառ, յօդուած, պլակատ, նախընտրական աղմուկ-ժըխոր, դեկրետներ ու հրահանգներ, հարիւրաւոր կոմունիստներ ու պաշտօնեաներ զօրաշարժի են ենթարկուած — մարդիկ ընտրութիւններ են կատարում։

Նախանցեալ տեսութեան մէջ ասացինք արդէն, որ այս տարի ընտրական օրէնքը զգալի սեղմումներ է մտցրել քուէի իրաւունք ունեցողների վերաբերմամբ։ Իրրեւ հետեւանք այդ սահմանափակումների, հազարաւոր քաղաքացիներ զրկուած են ընտրելու իրաւունքից։

Այսպէս, միայն Երեւան քաղաքում 3064 քաղաքացիներ յայտարարուած են ձայնա-